ԽՐԱՄԱՏՆԵՐՆ ՈՒ ԽՐԱՄՈՒՂԻՆԵՐԸ ՔՈՂԱՐԿԵԼՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Քողարկման նպատակն է հասնել ստորաբաժանումների հանկարծակիությանը և նրանց մարտունակության պահպանմանը: Քողարկման խնդիրներն են՝ ապահովել յուրային ստորաբաժանումների ծածուկությունը և հակառակորդին մոլորեցնել նրանց կազմի, դիրքի և մարտի մտահղացման վերաբերյալ: Քողարկման ամենակարևոր պահանջներն են շարունակականությունը, համոզիչ լինելը, բազմազանությունն ու ակտիվությունը: Քողարկման միջոցառումները մեկնարկում են ստորաբաժանումների կողմից ցանկացած դիրքի գրավման պահից և իրականացվում են բոլոր տեսակի մարտերում ու այլ գործողություններում:

Խրամատների և խրամուղիների քողարկում

Խրամատների քողարկումը սովորաբար ձեռք է բերվում դրանց գտնվելու վայրում: Խրամատը հեշտությամբ քողարկվում է, երբ այն տեղակայվում է հակառակորդի համար վատ տեսանելի և նրա ցամաքային դիտակետերից չերևացող վայրերում:

Ժամանակակից պայմաններում տեղանքի ինժեներական սարքապատման ընթացքում չափազանց դժվար է քողարկել մեծ թվով խրամուղիներ և հաղորդակցության անցատեղիներ քողարկման տեխնիկական միջոցներով, իսկ շատ դեպքերում գրեթե անհնար է: Հետևաբար, այդպիսի խնդիր, որպես կանոն, չի դրվում: Տեխնիկական միջոցներով ամբողջությամբ քողարկում են միայն խրամուղիների և հաղորդակցության անցատեղիների առանձին հատվածները:

Խրամատների և հաղորդակցության անցատեղիների տեղամասերի քողարկումը սովորաբար իրականացվում է հարթ դիմակ-ծածկոցներով, որոնց լայնությունը, կախված տեղանքի ընդհանուր ֆոնից և անհրաժեշտ նյութերի առկայությունից, կարող է թույլ տալ ծածկել միայն խրամատի փոսը (հաղորդակցության անցատեղին) կամ խրամատի փոսը բրուստվերի հետ միասին:

Եթե խրամուղիների և հաղորդակցության անցատեղիների ցանցը, որպես ամբողջություն, չի կարող քողարկվել, ապա դրանց հարող կամ դուրս հանված դիտարկման և հրաձգային զենքից կրակի վարման բջիջներն ու հարթակները պետք է հանգամանորեն քողարկվեն, ինչը նրանց կապահովի հակառակորդի նշանառու կրակից: Այդ կառույցները ցանկացած պայմաններում քողարկվում են հիմնականում հակառակորդի ցամաքային դիտարկումից: Օդային հետախուզությունից քողարկել դրանք թաքցնելու նպատակով հնարավոր չէ, սակայն հնարավոր է կրակային կառույցների տեղակայման ամբողջ համակարգի վերաբերյալ հակառակորդին մոլորեցնելու ընդհանուր պլանի համաձայն՝ քողարկել դրանք :

Հրաձիգների, գնդացիրների և նռնականետերի համար նախատեսված հարակից բջիջների հարթակները նպատակահարմար է քողարկել խրամուղու բրուստվերի տակ: Դրա համար, երբ խրամուղիները սարքավորվում են, պետք է ձգտել, որպեսզի ոչ միայն բջիջը կամ հարթակը, այլև դրա բրուստվերը չանցնի խրամուղու բրուստվերի սահմանները: Այդ դեպքում բջջի կամ հարթակի փորվածքը, որը ձևավորում է մութ բիծ, քողարկվում է տեղանքի դեն նետված հողի գույնի դիմակ-ծածկոցով:

Կարևոր է նաև, որ մշտական հիմունքներով աշխատեն խրամատային ՌԷՊ միջոցները կամ հերթապահ հակադրոնային հաշվարկները, որպեսզի հակառակորդը չկարողանա «շոշափել» կամ նետումներով ոչնչացնել դիմակները:

Ավազի պարկերի օգտագործման առնձնահատկությունը

Սպիտակ կամ մոխրագույն պարկերը տեղանքի ֆոնին հստակ առանձնանում են, դրանով իսկ «թեթև լուսավորելով» հակառակորդին յուրային դիրքերի «ամենանուրբ» տեղերը՝ անձնակազմի թաքստոցները, մարտական լրակազմի պահեստային վայրերը և այլն: Որպեսզի դիրքերը չապաքողարկվեն ավելի լավ է օգտագործել կանաչ գույնի և դրա երանգների պարկեր, ինչը, իհարկե, միշտ չէ, որ հնարավոր է կիրառել դրանց առկայության բացակայության պատճառով:

Եթե, այնուամենայինիվ, հնարավոր չէ ձեռք բերել այդ երանգներով պարկեր, ապա անհրաժեշտ է օգտագործել հողը, տորֆը, քողարկող ցանցերը կամ համապատասխան գույնի ներկը: Սակայն, դրա համար չարժե օգտագործել ծառերի ճյուղերը, որոնք կարող են

ծառայել որպես երկրորդական բեկորներ (օրինակ՝ FPV ԱԹՍ-ի հարվածի ժամանակ)՝ լրացուցիչ տրավմա պատճառելով մոտակայքում գտնվող անձնակազմին:



Լրացուցիչ պաշտպանություն ստեղծելու համար սպիտակ և մոխրագույն պարկերը հիանալի են քաղաքի սահմաններում շենքերի և շինությունների ոչնչացումը նվազեցնելու համար, քանի որ հազվադեպ են հակադրվում շենքերին:

Տանկերի և այլ մարտական զրահամեքենաների համար խրամատների և թաքստոցների քողարկումը

Տանկերի և այլ մարտական մեքենաների, ինչպես նաև հրանոթների և ականանետերի համար խրամատները և թաքստոցները քողարկելիս, հիմնականում օգտագործվում են տեղանքի տեսակային և թաքցնող հատկությունները: Շատ կարևոր է խրամատների և թաքստոցների այնպիսի տեղաբաշխումը, որի դեպքում տեղանքում շարժման հետքերը լինեն հնարավորինս նվազագույն չափով: Դա համար, գոյություն ունեցող ճանապարհների օգտագործմանը զուգահեռ, տանկերի (մարտական զրահամեքենաների) և տրանսպորտային միջոցների շարժը ուղղվում է դեպի խրամատներ և թաքստոցներ տեղանքի առավել քողարկված հատվածների երկայնքով՝ օգտագործելով անտառների եզրերը, անվար հողերը, ձորերը և այլն:

Առավել նպատակահարմար է թաքստոցները տեղաբաշխել անտառներում, ձորերում, այգիներում, ավերված կառույցներում կամ դրանց մոտակայքում, բնակավայրերում հովանոցների տակ, ծղոտի (խոտի դեզի) կույտերի մոտ և այլն՝ օգտագործելով քողարկման համապատասխան հնարքները: Տանկերի (մարտական զրահամեքենաների) խրամատնե-

ը պետք է տեղակայվեն տեղանքում՝ կախված դրանց մարտական կիրառման պայմաններից:









Բնության մեջ չկան ուղղանկյուն ծառեր, թփեր և բլուրներ: Ամրացցերի և հենակների միջոցով կոտրիր քողարկող ցանցերի ձևը






Քողարկիր բրուստվերը
12x18մ քողարկող ծածկ
Արագ քանդվող կար
Ամրացցեր
Հենակներ
Բրուստվերի մի հատվածը քողարկվում է խոտով և ճյուղերով
Ամրացցեր
Հենակ
Քաթան
Արագ քանդվող կար
Կանաչ (խոտի գույնի)
Դաշտում
Կանաչ (տերևի գույնի)
Թփուտներում
Մուգ կանաչ
Ծառերի շվաքում


Արագ քանդվող կար
12x18մ քողարկող ծածկ
Ճիշտ է
Սխալ է
Ճիշտ է
Ճիշտ է

Հակառակորդի օդային հետախուզությունից խրամատների և թաքստոցների քողարկման ամենամեծ արդյունավետությունը ձեռք է բերվում տեղանքի մերկ հողի գույնի արհեստական բծավորմամբ (распятнения): Այս դեպքում օգտագործում են հարթ (թաքստոցների համար) կամ ուռուցիկ (խրամատների համար) համընկնող դիմակ-ծածկոցներ, որոնց գույնը և ֆակտուրան պետք է համապատասխանեն արտանետված հողին: Դիմակների չափերը կատարում են նվազագույնը՝ ապահովելով միայն փորվածքի ծածկվածությունն այնպիսի հաշվարկով, որ արտանետված հողի մակերեսը լինի դիմակի շարունակությունը :

Խրամատը քողարկելիս մեծ նշանակություն ունի տանկի (մարտական զրահամեքենայի) ազատ մուտքի ապահովումը և առանց դադարի կրակ վարելու հնարավորությունը: Դրա համար ընդհանուր դիմակ-ծածկոցի մի մասը, որը արագորեն շրջվում է դեպի կողմ կամ հետ է քաշվում, կահավորվում են զառէջի (аппарель) վերևում, իսկ մեքենայի հրանոթի փողի մոտ՝ կահավորում են դիմակ-ծածկոցի ետ շպրտվող անկյունները, որոնք բացում են խրամատի առաջնամասը մինչև պահանջվող սահման:

Աղբյուրը. Unfair Advantage